

ՍՈՒՐԱՆՆԱԳ ԳՐԻԳՈՐԻԱՆ



ԻԶՆԱԴԱՐՅԱՆ ԱԽԿՆԵՐ  
ԵՎ  
ԶՐՈՒՅՑՑՆԵՐ



**Ս. Մ. Գրիգորյան**

**Միջնադարյան առակներ  
և գրույցներ**

ԵՐԵՎԱՆ  
ՏԻԳՐԱՆ ՄԵՏ  
2006



ՀՏԴ 809.198.1 : 891.981.0  
ԳՄԴ 81.2Հ + 83.3Հ  
Գ 888

Նստրի՝ Կ. Գրիգորյան

Գրիգորյան Ս.Ս.  
Գ 888 Միջնադարյան տաճարներ – շրոմյաններ: Վերլուծ.  
գրաւ.- Եր.: Տիգրան Մեծ, 2006.- 42 էջ:

Հայ միջնադարյան մեկնողական գրականությունն  
իրեն շտեմարան ամբարել է բառապաշարի գրավոր և բա-  
նավոր հարստությունները:

Այստեղ է ձևավորվել նաև «առակաւոր խօսքը»:

Մի շարք մեկնիչների աշխատություններից դուրս բեր-  
ված «առակաւոր խօսքի» նմուշները կարող են համալրել  
միջնադարյան առակագրության էջերը:

Գ 4602020100  
774(01)2006 2006 թ.

ISBN 99941 - 0 - 171 - 4

ԳՄԴ 81.2Հ + 83.3Հ

© Գրիգորյան Ս., 2006 թ.

Աստվածաբանության մեջ հայտնի է,  
որ Սողոմոնի եռագրությունն ավելի դյուրըմբռ-  
նելի դարձնելու համար ուսուցումը սովորա-  
բար սկսվել է «Առակաց գրքով»: Մեսրոպյան  
տառերով առաջինը լինելու պատիվը հայոց  
մեջ վերապահվել է հատկապես այս գրքին,  
իսկ դարեր անց, միջնադարյան մեկնողական  
գրականության առաջին փուլում այն դարձել է  
ամենահաճախ մեկնվող գրքերից մեկը: Հե-  
տաքրքրությունն այս գրքի նկատմամբ չի բու-  
լացել առայսօր, և նրա առաջին նախադասու-  
թյունը մեր պատմության քրիստոնյա շրջանի  
դրվագների մեջ, ինչպես Տրդատ Թագավորի և  
Գրիգոր Լուսավորչի պատմությունը, հայոց  
գրերի գյուտը, Վարդանանց պատերազմը և  
այլն, վերածվել է հաճախ հիշատակվող  
խորհրդանշի. «Ճանաչել զիմաստութիւն եւ  
զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել  
զդարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարու-  
թիւն ճշմարիտ եւ ուղղել զիրաւունս...»: այս  
նախադասութեամբ է սկսվել հայ գրավոր մշա-  
կույթի ամբողջ մի դարաշրջան:

Հայտնի է, որ առակները և գրույցները բա-  
նավոր խոսքում սիրված հնարանք են եղել: Մի  
երևույթն ավելի պարզով բացատրելու միջոցը  
վաղնջական է, որքան մարդկային միտքը:  
Պատահական չէ, որ Նոր Կտակարանում, երբ



անհրաժեշտ էր նորովի մեկնել այս կամ այն երևույթը՝ առակը դարձել է հաճախ կիրառվող միջոց՝ խոսքն ավելի մատչելի դարձնելու համար:

Միջնադարյան մեկնողական գրականության մեջ «առակատր խօսքի» տակ հասկացվում են ոչ միայն բուն առակը, այլև՝ պատկերավորման բոլոր այն դրսևորումները, որոնք ունեն «ներքին» կամ «ծածուկ» իմաստներ (փոխաբերական խոսք, այլաբանություն, խրատ, դարձված և այլն), և միջնադարյան մեկնիչն իր առաքելությունը տեսնում է այդ ծածուկ իմաստները վերհանելու, մատչելի բացատրելու մեջ:

«Առակատր խօսքին» հաճախ են դիմել հայ մեկնիչները, որը Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու երկերում արդեն վեր է ածվել առանձին գեղարվեստական ժանրի: Իսկ ինչպե՞ս է ձևավորվել այն, յուրաքանչյուր հեղինակի մոտ ինչպե՞ս է դրսևորվել, ինչպե՞ս են սրան նպաստել հայերենի լեզվաոճական հնարավորությունները:

**Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինչպես մեկնողական գրականության մեջ տեղ գտած բառերի բացատրություններն ապագա ձեռագիր բառարանների հիմքն են դարձել, այդպես էլ «առակատր խօսքի» տարրերը ձևավորել են առակի ժանրը:** Աստիճանաբար, ժողովրդից գրաբարի ավելի ու ավելի հեռանալու հանգամանքը ստիպում էր մեկնիչներին անդրադառնալ թե՛ բառերի բացատրություններին, և թե՛ տեքստը մատչելի մատուցելու համար դիմել զանազան պատկերավորման միջոցների: Այսկերպ, մեկնություններում բառերի բացատրություններն ի մի բերելով, գրվեցին առաջին ձեռագիր բառարանները,

իսկ գրաբարի հարուստ պատկերավորման միջոցների գործադրումը նպաստեց առակի ժանրի ձևավորմանը, այսինքն՝ մեկնողական գրականության մեջ փոխառյալ առակների կողքին ստեղծվեց հայկական միջնադարյան առակը:

Մի քանի դար շարունակ հայ վարդապետները շարունակում են մեկնել Սուրբ Գրքը՝ ոչ միայն ստեղծելով ինքնուրույն երկեր, այլև շատ հաճախ գրելով մեկնության մեկնություն: Մեկնիչներն այսկերպ, մի կողմից կանխում են երկը մոռացության մատնելու հնարավոր վտանգը, մյուս կողմից՝ փորձում ստեղծվածը նորից արժևորել: Մասնավորապես, Գրիգոր Տաթևացին գրելով իր «Առակաց մեկնութիւն»-ը՝ փաստորեն ստեղծում է Ներսես Լամբրոնացու «Առակաց մեկնութեան» մեկնությունը: Միևնույն երկի նորանոր մեկություններ գրելու գոնե մեկ պատճառն ըստ միջնադարյան վարդապետի՝ ճշարտությանը հետամուտ լինելու, աշխարհը և երևույթները ոչ պարզամտորեն ընկալելու անհրաժեշտությունն էր. «չէ պարտ աշակերտին միայն լսել ի խրատողէն եւ դիրահաւան լինել, որպէս Եւայ զխրատ օձին, այլ պարտ է դարձեալ հարցնել եւ քննութեամբ զստոյգն զհտել» (Մատենադարան, ձեռագիր N 1200, Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն առակաց, էջ 621)\*:

Հայ վարդապետները ներքին մի նվիրումով առավելապես վերլուծության են ենթարկել

\* «Աշակերտը չպետք է միայն լսի ուսուցանողին և համաձայնի, ինչպես Եվան օձի խրատը, այլ նաև հարցեր տա և քննելով՝ ճիշտն իմանա» (թարգմ.- Ս.Գ.)



«Առակաց գիրքը», «Երգ երգոցը», «Ժողովողը», Հոբի գիրքը, սաղմոսները, չորս ավետարանիչների գրքերը:

Այս մեկնությունները, հեղինակային ընդգծված ոճական տարբերություններով հանդերձ, մեկ նկատելի ընդհանրություն ունեն: Նրանք շարադրված են պարզ, մատչելի, որոշ առումով՝ բանաստեղծական ոգևորությամբ: Ոճական հնարանքները պարզորոշ տեքստը գրավիչ դարձնելու նպատակ են հետապնդում, և շարադրանքներում հաճախ հանդիպող ծավալուն համեմատությունները, այլաբանությունները, փոխաբերական խոսքն արդեն իսկ «առակառոր խօսքի» բաղադրիչներ են, հատկապես եթե դրանք վերջանում են առակին հատուկ խրատական եզրահանգմամբ:

Այսպես օրինակ, Ներսես Լամբրոնացին «Մեկնութիւն առակաց» գրքում՝ մեկնելով «Լուր որդեակ խրատու հօր քո և մի մերժէ զօրէնս մօր քո» հատվածը՝ գրում է, «Ձի որպէս մառախուղ մրրկին ի թանձրանալն ի վերայ ճանապարհորդացն ոչ գիտեն յո՞ երթան, նոյնպէս և խռովիմք յերկիւղէ մահուն, որով կործանեալ մրրիկէ ի վերայ չարացն զի ոչ գիտեն յո երթան, քանզի մինչև ցայն նշկահեալ էին զայն օր և ախտից հեշտութեան ծառայէին և ոչ զիմացական կեանսն խոկային և ոչ յայն յուսային: Ի եկեալ մահն ըմբռնէ զնա ակամա և ձգէ ի հանդերձեալն և զի ամօթով են և անընդել այնմ ընթացից, մրրիկ է նոցին և խաւար, օր սոսկալի և փախուստ է անշաւիղ, (Մատենադարան, ձեռագիր N 1144, Ներսէս Լամբրոնացի, Մեկնութիւն առակաց, էջ 14ա).

եզրափակող նախադասությունը գեղարվեստական ընդհանրացում է դառնում՝ «յորժամ ոչ պճնիս, յերկնաւոր գեղեցկութիւն խոկաս» **էրբ չես պճնվում, երկնային գեղեցկությունների մասին ես մտորում** (նույնը, էջ 5բ):

Նմանատիպ շարադրանքի բազմաթիվ այլ հատվածներ ունի Լամբրոնացին իր մեկնության մեջ, որոնք նրա բավականին ծավալուն երկը դարձնում են հեշտալուր, դյուրըմբռնելի և աստվածաշնչյան խորհուրդները մատչելի դարձնող: Այդ հատվածներից մեկ ուրիշում մեկնվում է «Լաւ է զիս ստանալ, քան զոսկի և զականս պատուականս» դարձվածը: Հեղինակը մարմնավորի և հոգևորի եզրերը բացատրելով՝ զուգահեռ է անցկացնում նրանց բարձրագույն ձևերի միջև. «Եթէ վասն մարմնոյ մեծութեան և փառաց ասէր, ոչ յաւելոյր թէ լաւ եմ քան զոսկի և զականս պատուականս, քանզի մարմնոյ մեծութեան և փառաց ծայր այս է. և չկարէ որ քան զսոյն և զփառս ասէ, որ յարդարութենէն ուղղի և այս լաւ է, քան զոսկին և զականց փառք, զի արդարքն իբրև զարեգակն ծագեն յարքայութեան երկնից ոսկին աւկամբքն հանդերձ յարեգակնէ անտի առնուն զճաճանչատեսակութիւն. **ուրեմն արդարութեան փառք և մեծութիւն, որ իբրև զարեգակն փայլեցուցանէ լաւ է, քան զնոսին, որք յարեգակէն առնուն զճաճանչ**» (նույնը, 54բ): Վերջին պարբերությունը դարձյալ ձեռք է բերել գեղարվեստական խոսքի արժեք:

Մեկնելով «Առակաց գրքի» մեկ այլ՝ «Լաւ է տգիտին, որ գնա միամտութեամբ իւրով, քան անզգամին, որ շաղաւաշուրթն իցէ» նախադա-



սությունը, Լամբրոնացին գեղարվեստական ընդհանրացում է կատարում հենց վերլուծության սկզբում. «Գիտել պարտ է, թե իմաստութեան խելք պիտոյ է և հաստատութիւն» /իմաստնությանը խելացիություն և հաստատականություն է պետք/ և շարունակում. «թէ ոչ՝ որոգայթի կիրթն ի գիտութիւն պակասամտութեամբն հանճարոյ, ի շատ խօսութիւն, ի յանդգնութիւն, ի սնափառութիւն, ի յանխտրութիւն մեղաց... արդ, ի կշռելն իմաստունս լաւ համարի գտգէտն, որ միամիտ է ի սահման պատուիրանին և երկիւղած, քան զայն, որ առնու զգիտութիւն առանց սանձահարութեան երկիւղի և շատխօսութեամբ շաղաւաշութիւն լինի, զմարգարիտն առաջի խոզից արկանելով և զխորհրդական բանս յերգիծանումն տալով ախմարաց» (Մատենադարան, ձեռագիր N 1144, Ներսէս Լամբրոնացի, Մեկնութիւն առակաց, էջ 118բ):

Հայտնի է, որ հատկապէս Նոր Կտակարանում քարոզելու նպատակով բերվող առակների մի մասը սկսում է «նման է» համեմատական եզրով (օրինակ՝ «նման է արքայութիւն երկնի»): Եվ քանի որ Նոր Կտակարանում հաճախ են առակներ բերվում Տիրոջ կողմից, ուստի հայ մեկնիչները, այս դեպքում Լամբրոնացին, վերոնշյալ գրքի մեկնության մեջ անդրադառնում է «նմանության» հարցի քննարկմանը: «Փայտ կենաց է ամենեցուն, որ պատսպարին ի նա և որ յենում ի նա իբր և ի տէր հաստատութեամբ» պարբերության վերլուծության մեջ նա գրում է. «Նմանեցուցանէ զիմաստութիւն կենաց փայտին...: Իսկ անհաւատիցն ոչ այսպէս, այլ խաչին բան մոցին յիմարու-

թիւն» (նույնը, 26բ): Այսինքն՝ Լամբրոնացին դիմում է Նոր Կտակարանի քարոզների կառուցման սկզբունքին. որևէ երևոյթ ավելի հասկանալի է դառնում և հեշտ ընկալվում համեմատական եզրերի առկայության դեպքում: Նույնկերպ մեկնում է նաև պարբերության «իբր»-ը՝ այն կապելով Հիսուսի հետ. «Չիբրն ասելով զայն ցուցանէ թէ զանձն ունայնացոյց... և նմանութեամբ մարդկան հնազանդեղև հօր..., բայց դու ի տեսանելն զնա ի ծառայի պաշտօն ծառայական մարմնով մի թերևս հաւատէր, այլ հաստատեաց ի նա իբր և ի ստոյգ Տէր և ի թագաւոր անխարդախ իմաստութեամբ, զի յայսպէս հաստատելն ոչ գայթաղիս» (նույնը, 26բ):

Միջնադարյան մեկ այլ մեկնիչի՝ Համամ Արևելցու «Առակաց գրքի» մեկնությունը նույնպես շարադրված է աշխույժ, կենդանի ոճով: Անդրադառնալով բնագրային բառի, նախադասության, հատվածի մեկնությանը՝ Արևելցին պատեհ առիթով նշում է՝ ինչպես ընկալել դրանք՝ ուղղակի թե փոխաբերական իմաստով: Օրինակ, բերելով «Եղին մօտ ի դժոխս ընդ երկրածինս զշաւիղս» արտահայտությունը, գրում է. «Շաւիղ կոչէ զմիտս անխրատիցն և զղրունս դժոխսոց զբերանս անզգամիցն...» (Մատենադարան, ձեռագիր 1151, Համամայ Արևելցոյ, Մեկնութիւն առակաց, էջ 1բ), այսինքն՝ ըստ հեղինակի, խոսքն այստեղ փոխաբերական իմաստ ունի:

Միախոյստելով իր մեկնությունը Սողոմոնի խրատներին՝ Արևելցին շատ հաճախ առիթն օգտագործում է բարոյախրատական քարոզ



շարադրելու համար, ազատ խորհրդածություններ է անում՝ չմնալով քննվող նյութի շրջանակներում, երբեմն էլ՝ չպահպանելով լեզվի խստությունը, այսինքն, ըստ էության, ազատ մեկնություն է անում: «Որ ունի գլին շուն, անմիտ է. քան զայն, որ ծակ կարաս կրէ կամ ի ջրհոր խոր ջուր կամ զդառն պտղոց մայրն տնկէ, որ ոչ յողոք բանս կայ որպէս գայլ ի մտոր... և այսպէս սնուիք են բոգորսողին գործք, որ գնայ ընդ խորս գիշերոյ լկտութեամբ քնոյ» (նույնը, էջ 40ա):

Շարադրանքի որոշ հատվածներ էլ ընդգծված պաթետիկ բնույթ ունեն՝ առատ բացականչություններով, հարցական նախադասություններով և կոչականներով («Ու՞մ վայ, ու՞մ խռովութիւնք, ու՞մ դատաստանք, ու՞մ դժնդակութիւնք և վերք տարապարտուց, ու՞մ կապուտկական անկողինք» և այլն (նույնը, 48ա):

«Առակաց գրքի» մեկնություններից մեկը, որ գտնում ենք 14-րդ դարի ձեռագրերից մեկում՝ և որ պատկանում է Վարդան Արևելցուն, վերնագրված է ոչ թե «Մեկնութիւն առակաց», այլ՝ «Պատճառ Առակացն Սողոմոնի իմաստնոյ», որը առակաց գիրքը գրելու պատճառները վեր հանող փոքրիկ մի մեկնություն է: Հեղինակի կարծիքով ամբողջ «Առակաց գիրքը» այլաբանական մարգարեություն է՝ շարադրված առակաբար, և որը նախապատրաստում է հասկանալու Երգ երգոցը: Նրանք, ովքեր «Առակաց գրքով» «ըստ խրատոյ իմաստնոյս զմանգական հասակն դաստիարակեցին սրբութեամբ և գերիտասարդութիւն անա-

րատ հասուցին մինչև ի ծերութիւն», ահա սրանք էլ, ըստ Արևելցու, հետո կարող են ասել՝ «թէ խանդակաք սիրո վեմ ես առ Աստուած»<sup>1</sup>:

Մեկնողական գրականության ավանդույթները հրաշալի պահպանվել են նաև ուշ միջնադարում: Մասնավորապես, դրանք շարունակվում են տաթևյան դպրոցի մատենագիրների կողմից: Այստեղ Գրիգոր Տաթևացու աշխատությունների միայն ցանկի թվարկումը բավական է նկատելու, որ հեղինակն իր ողջ ներուժն ուղղել է Սուրբ գրքի վերլուծություններին, իսկ նրա վարքը և կենսագրությունը փաստում են նաև, որ իր կյանքը նա նվիրաբերել է դրանց սկզբունքային իրագործմանը. «Մաղմոսի քաղուածոն», «Առակաց մեկնութիւն», «Գիմաստութեան և զԺողովողին», «Գիրք բարոգութեան» (Ամարան, Չմերան), «Յորայ լուծմունքն», «Յոհաննու Աւետարանի քաղուածոն», «ԳԶաղուածոն Մաթեոսի», «ԳԵսայեայ քաղուածոն», «ԳՈսկեփորիկն» և այլն:

Տաթևացին ինքը վկայում է, որ մի կողմից օգտվել է նախորդներից, մյուս կողմից՝ հարազատ է մնացել դասական հայերենի բառազանձին և ոգուն. «ոչ ամենևին օտարաձայն անելորդս խուզեալ և ոչ գեղջուկ իմն աշխարհական խօսից յարմարեալ: Այլ զպիտանիս եկեղեցոյ և վարդապետաց ոգէշահ խնդիր հաւատոյ միայն հոգ տարեալ» (Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729, էջ 772):

«Առակաւոր խօսքին» Տաթևացին բազմիցս անդրադառնում է Աստվածաշունչը մեկնող



երբեկից գրված իր ամենագողտրիկ և միաժամանակ փիլիսոփայական խորքով աչքի ընկնող աշխատություններից մեկի՝ «Գիրք հարցմանց»-ի մեջ: Ոչ միայն շարադրանքն իր գրավչությամբ, այլև շարադրանքի ոճը, ծավալուն համեմատությունները, մակդիրների առատ կիրառությունը, ինչպես նաև բերվող պատումները, լեզունները, առակները գիրքը դարձրել են ժամանակակիցների կողմից բազմիցս հիշատակվող և սիրված երկ: Աստվածաշունչը հանգամանորեն վերլուծող այս գրքում հայ եկեղեցուն նվիրված բազմաթիվ հատվածներ կան: Նրա առաքելադիր վիճակի ողջ պատմության հանգուցակետերը չափազանց հետաքրքիր, պատմական փաստերով և ավանդապատում հատվածներով են ներկայացված գրական ժառանգության այս հատորյակում: Բավական հաճախ փաստերի այս կամ այն մանրակրկիտ մեկնաբանությունը նրա աշխատության մեջ ընդգրկման առումով ձեռք է բերում պատմական, փիլիսոփայական, աստվածաբանական արժեք՝ միաժամանակ, երբեմն-երբեմն էլ ավարտվում է բուն երևույթը ներկայացնող բառի ստուգաբանությամբ, նրա փոխաբերական կամ այլաբանական իմաստի գնահատմամբ:

Այս հատվածներից մեկում տեղեկանում ենք, որ հայոց խաչքարերի ծաղկած լինելու խորհրդանիշը կապված է Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Ստանալով տերունական սրբությունների վիճակին մասնակցելու իրավունք, հայոց եկեղեցին՝ ի դեմս Գրիգոր Լուսավորչի, ստանում է Հարության մասը. վիճարկվում էին Սուրբ Հակոբ պատրիարքարանը, Գողգոթան, Սուրբ Կարա-

պետն ու սնարը և Սուրբ Հարությունը. «և արկեալ վիճակս ի վերայ յարութեան՝ անկաւ հայոց և տրտմեցան ոմանք յազգէ նոցա» (Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 548) («և վիճակ գցելով Հարության համար՝ այն բաժին ելալ հայերին և տրտմեցին [այդ] ազգերից ոմանք»- թարգմ.-Ս. Գ.): Որպեսզի ներկաները համոզվեն, որ վիճակահանությունը նախախնամության կամքով է եղել, հայոց կաթողիկոսը ներս է բերում մի կանթեղ և աղոթում Աստծուն՝ ի նշան Քրիստոսի հարության լույս իջեցնել. կանթեղը լուսավորվում է, որի պատճառով, հատկապես, կաթողիկոսը ստանում է «Լուսավորիչ» մականունը. «Եւ սահմանեալ գտեղիսն կախեաց կանթեղս յանուն ազգացս: Եւ նա խնդրեաց յԱստծոյ զիջումն լուսոյն ի նշան յարութեան Քրիստոսի: Եւ վասն այն այլ ազգ ոչ հաւատա, զի յառաջն չկայր մինչ նա. և առաւել վասն այն անուանեցաւ լուսավորիչ» («Եվ սահմանված տեղում կախեց կանթեղը ազգի անունով: Եվ նա խնդրեց Աստծուն լույս իջեցնել՝ ի նշան Քրիստոսի հարության, քանի որ այլազգիք չէին հավատում նախկինում [նման օրինակ] չունենալու պատճառով. և առավելապես այդ պատճառով կոչվեց «Լուսավորիչ» (թարգմ.-Ս.Գ.) (նույնը, էջ 549):

Պարզությունը, պատկերավորման միջոցների գործադրումը հատուկ են Տաթևացու երկերի շարադրանքին ընդհանրապես: Ասենք, բացատրելով ջրի զանազան հատկություններ-

3 Տաթևացին ինքը ժամանակակիցների կողմից ստացել է «Երկրորդ լուսավորիչ հայկազեան ազգի» մականունը, և զանազան լեզուներ իյուսվել են նաև նրա անձի շուրջը:



րը, Տաթևացին ավելացնում է նաև աչքի համար նրա գեղեցիկ լինելը. «զի գեղեցիկ լինի ի տեսս աչաց երփն երփն գունով և վետս վետս. այսինքն ծալ ծալ ծիծաղի երեսօք» (նույնը էջ 208): Մի այլ տեղ հեղինակը բանիմաց մարդուն նմանեցնում է քաղցրահամ ջրի, որը երկրի ընդերքում անցնելով ավազի միջով՝ դառնում է հաճելի և պիտանի. «յօրինակ մարդկան՝ որ մարզին և կրթին և ապա պիտոյանան Աստծոյ և մարդկան» (նույն տեղը):

«Մեկնութիւն առակաց»-ում, ինչպես սովորաբար Տաթևացին վարվում է, սկզբում տեսական բացատրություններ է տալիս (ինչ է առակը, ինչու է Տերը Ավետարանում առակներով խոսում, ինչ տարբերություն առակի և օրինակի միջև), ապա անցնում բուն մեկնության նյութին: Խուսքը բաժանում է երեք տեսակի «Ջի երեք է որոշումն բանի, այսինքն՝ **հասարակաց բան, առակաւոր բան, իմաստութեամբ բան**»... «առակն բանին է և օրինակն՝ իրօք» (Մատենադարան, ձեռագիր N 1200, Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն առակաց, էջ 620): Իսկ ի տարբերություն սրանց՝ «սաղմոսն երգ է վասն որոյն է չափեալ, իսկ առակն խրատ է մանկանց վասն որոյն է չափեալ և հեշտալոր» (նույն տեղը), այսինքն՝ առակը հատկապես ուսուցանելու համար է, ուստի մեծ վարդապետը բազում և բազմապիսի պատգամներ է հղում իր ընթերցողներին, հատկապես վարդապետներին, որոնց վստահված է մարդկանց կրթելու խնդիրը. «Որպէս մեղուն ծնանի ձագ ոչ ի սերմանէ այլ ի վաստակոց իւրոց, սոյնպէս և վարդապետացն պարտ է ստանալ հոգևոր զաւակ, այսինքն զաշակերտս բանին և նոքօք ուրախ լինի որպէս մայր

որդովք բերկրեալ ըստ Դաթի» (նույնը, էջ 668):

Տաթևացին, մարդու գնահատման չափանիշներով, բավականին մոտ է կանգնած իր նախորդներից հատկապես՝ Նարեկացուն: Նրա կարծիքով մարդն աստվածակերպ է, և ի վերջոյ յուրաքանչյուր բանական արարած չափանիշներ ունենալով աստվածաշնչյան լավագույն կերպարները պետք է նպատակ ունենա վերագտնել աստվածատուր, սկզբնական, սակայն կորուսյալ բնութագիրը:

Նկատելիորեն, հայ մեկնողական գրականությունն իբրև շտեմարան ամբարում էր բառապաշարի գրավոր և բանավոր հարստությունները, որոնք բերում են նաև ժանրային բազմազանության:

Ընթերցողին են ներկայացվում Գրիգոր Տաթևացու աշխատություններից դուրս բերված «առակաւոր խօսքի» մնուշները, որոնք կարող են համալրել հայ միջնադարյան առակագրության էջերը:





## Առակ



ի ոմն ի վարդապետաց յորժամ ծերացաւ, աչքն կուրացաւ և յամենայն ժամ ցանկայր որ սուրբ սրտիւ քարոզէր: Եւ պատանի մի առաջնորդէր նմա և տանէր ի տեղի ուր քարոզէր: Եւ օր մի ձանձրացեալ պատանայն, տարաւ զնա ի լեառն բարձր և ասէ. ահա ժողովորդ՝ քարոզեա՛: Եւ նա քարոզեաց և ոչ ոք էր անդ. ի յօրհնելն ի վերջն ձայն եղև ի հրեշտակաց որք ասէին. բարի քարոզես, ո՛վ բարի քահանայապետ (Գիրք քարոզութեան, Չմերան, էջ 376):



Վարդապետներից մեկը, երբ ծերացավ՝ կուրացավ. և ամեն ժամ ցանկանում էր սուրբ սրտով քարոզել: Չանձրանալով՝ պատանին մի օր տարավ նրան մի բարձր լեռ և ասաց. ահա՛ ժողովուրդը. քարոզի՛ր: Եվ նա քարոզեց. [մինչդեռ] ոչ ոք այնտեղ չկար: Օրհնության վերջում ձայն եկավ հրեշտակներից, որոնք ասում էին. բարի քարոզես, ո՛վ բարի քահանայապետ (Գիրք քարոզութեան, Չմերան, էջ 376):



## Առակ

**Ա**սեն թե՛ ոմն մարդ եկն առ խոստովանա-  
հայրն և ասէ. զարկի զոմն կղերիկոս և  
նա ասէ՝ փայտով հարեր թէ թրով. և նա ասաց՝  
թրով: Դարձեալ ասաց. թրին բերանովն հարեր թէ  
կողովն. և ասաց՝ բերանովն: Դարձեալ եհարց.  
խոցեցէր թէ սպանեցեր. և նա ասէ թէ սպանի: Ասէ  
խոստովանահայրն. ով թշուառական՝ սպանեալ  
ես և ասես թէ՛ զարկի. որչափ ծանր է սպանելն,  
քան զհարկանելն (Գիրք քարոզութեան, Ամա-  
րան, էջ 319):

**Ա**սում են՝ մի մարդ եկավ խոստովանա-  
հոր մոտ և ասաց. մի կղերի եմ հարվա-  
ծել. նա հարցրեց. փայտով ես հարվածել, թե  
թրով. և սա ասաց՝ թրով: Դարձյալ հարցրեց.  
թրի բերանով ես հարվածել, թե՞ կողքով, և [սա]  
ասաց՝ բերանով: Դարձյալ հարցրեց. խոցե-  
ցիր, թե՞ սպանեցիր, և նա ասաց՝ սպանեցի: Ա-  
սաց խոստովանահայրը. ո՞վ թշվառական,  
սպանել ես և ասում ես, թե «հարվածեցի».  
ծանրագույն չէ՞ սպանելը, քան հարվածելը:



## Առակ

Թագաւոր մի, որ իշխէր տասն թագաւորաց, յորժամ եհաս օր մահուն նորայ, հրամայեաց զպատանս իւր կապել ի ձող մի երկայն և շրջել ընդ քաղաքն և ասել բարձր ձայնիւ. յամենայն թագաւորութենէն զոր ունէր արքայ՝ զայս չափ ինչ տանի ընդ իւր (Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 595):



ի թագաւոր, որ իշխում էր տասը թագաւորների, երբ վրա հասավ մահական օրը, հրամայեց իր պատանը կապել մի երկար ձողի և քաղաքով մեկ շրջելով՝ բարձր գոչել. ամբողջ թագաւորութիւնից, ինչ ունէր արքան՝ այսքանն է տանում իր հետ:





### Ավանդություն


**Դ**այեակ նորա յորժամ տարաւ զնա ի Կեսարիա և ի մերձեմալն ի քաղաքն, նստաւ ի ներքոյ ծառոյ ինչ հանգչիլ և եկեալ հաւ մի նստաւ ի վերայ ծառոյն, զոր ոմանք **գուրգուր** և ոմանք **դռուն** կոչեն և ձայնեաց՝ **գուր-գուր**: Իսկ իմացաւ դայեակն եթէ՝ Հոգին Սուրբ է ձևակերպեալ ի տիպ հաւու, որ ունի զնմանութիւն աղանոյ և անուանեաց զմանուկն **Գրիգոր**, զի **գր-կեալ** և **զգուեալ** եղև Հոգւոյն Սրբոյն (Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 421):




**Դ**որ նրա դայակը տարաւ նրան Կեսարիա [և] քաղաքի մերձակայքում նստեց մի ծառի տակ հանգստանալու, մի թռչուն, որին ոմանք **գուրգուր**, ոմանք էլ **դռուն** են կոչում. եկաւ, նստեց ծառին և կանչեց՝ **գուր-գուր**: Դայակը կռահելով, որ Սուրբ Հոգին է [իջել] թռչնակերպ՝ աղաւմու նմանությամբ, մանկանն անվանեց **Գրիգոր**, այսինքն թե՝ գրկված և զգված եղաւ Սուրբ Հոգու կողմից:



## Զրույց

րպէս այն թագաւորն, որ բնաւ ոչ ուրախանայր, բայց արդար դատաստան առնէր: Եւ հարցին զթագաւորն, թէ ընդէ՞ր ոչ ուրախանաս և նա ասէ. վաղիւն տաց պատասխանի: Եւ ի վաղիւն հրամայեաց փողահարացն փող հարկանել և երկեան յոյժ: Եւ ետ բերել զեղբայրն իւր և նստոյց զնա մերկ ի վերայ փտած աթոռոյ միոյ և հոր ի ներքոյ աթոռոյն և սուր կախեալ ի վերայ գլխոյն և այլ սուր յառաջուստ և յաջ և յահեակ կուսէն: Եւ ետ բերել գուսան և ուրախութիւն առաջի նորայ: Եւ ասէ թագաւորն. եղբայր ընդէ՞ր ոչ ուրախանաս և ասէ եղբայրն. որպէ՞ս ուրախանամ ի մէջ այսչափ նեղութեան: Եւ ասէ թագաւորն. նոյնպէս և ես տեսանեմ զիս ի մէջ բազում նեղութեանց, քանզի որպէս դու վախեցար ի ձայն փողոյն իմոյ, որ չես ինձ վնասակար, նոյնպէս և ես երկնչիմ ի յետին փողոյն, զի գիթոր և վնասակար եմ Աստծոյ:

նչպէս այն թագաւորը, որ բնավ չէր ուրախանում, սակայն արդար դատում էր: Եվ հարց տվեցին թագաւորին, թե ինչու չի ուրախանում: Եվ նա ասաց՝ վաղը պատասխան կտամ: Իսկ մյուս օրը հրամայեց փողահարներին փողեր հնչեցնել, և [բոլորը] խիստ վախեցան: Ապա բերել տվեց եղբորը և մերկ նստեցրեց փտած աթոռի վրա, իսկ աթոռի տակ հոր էր, գլխի վրա կախված սուր և սրեր՝ առջևից և աջ ու ձախ կողմերից: Եվ գուսաններ բերել տվեց, և ուրախություն [սկսվեց] նրա առջև: Եվ հարցրեց թագաւորը. ինչու՞ չես ուրախանում, եղբայր: Եվ պատասխանեց եղբայրը. «Այսքան նեղության մէջ ինչպէ՞ս ուրախանամ»: Եվ ասաց թագաւորը. «Ես էլ ինձ բազում նեղությունների մէջ եմ տեսնում, որովհետև դու վախեցար իմ փողի ձայնից [այն դեպքում], երբ վնաս չես տվել ինձ, իսկ ես վախենում եմ վերջին փողից, որովհետև մեղավոր և վնասակար եմ Աստծուն»:





## Խրատ

**Ա**րպես նոքա, որք սաթրինճ խաղան, հերթով առնուն ի ձեռն զսաթրինճն և ձգեն ի քսան: Եւ որչափ խաղն միոյն է՝ բազում ինչս տանի ընկերէն և ընկերն խաղաղ մտի, մինչև յինքն դառնայ խաղն: ...Եւ խաղընկերն յորժամ յաղթ՝ իսպառ կողոպտէ և մերկացուցանէ զընկերն: ...Եւ այժմ խաղն մեղաւորաց է և ճարտար խաղան՝ ուտելով, ըմպելով և արբենալով և պոռնկիլով, խլելով և զրկելով և Աստուած համբերէ նոցա մինչև խաղն ի յիքն դառնայ... և յայնժամ ինքն խաղայ և մեղաւորքն լռեն...



**Հ**նչպես նրանք, որ սաթրինճ [զառ, նարտ -Ս.Մ.] են խաղում՝ հերթով ձեռքն են առնում այն և ձգում քսաը: Եվ քանի դեռ խաղը մեկինն է՝ խաղընկերոջից բազում իրեր է տանում, իսկ ընկերը խաղաղ մտած [սպասում է] մինչև խաղը շրջվի իրեն: ...Իսկ երբ հաղթում է, իսպառ կողոպտում և մերկացնում է ընկերոջը:

Եվ այժմ խաղը մեղավորներինն է, որ ճարտար խաղում են՝ ուտելով, խմելով, հարբելով, պոռնկանալով, խլելով ու զրկելով. և Աստված համբերում է մինչև խաղը դառնա իրեն, և հետո ինքը կխաղա, իսկ մեղավորները կլռեն...



## Խրատ

**Չ**որօրինակ, թագատրոն տայ ի մարդ մի  
բազում և ազգի-ազգի կենդանիս, զի  
պահեսցէ. որ մինն լինի ընտակեր և միսն  
մսակեր, այլքն խոտակերք կամ հացակերք.  
Խրաքանչիւրոցն պիտոյ է զիւր կերակուրն տալ և  
ապա ապրին նոքա: Ապա թէ ընտակերին միս  
տայ և առիւծուն ունտ, տգիտութիւն է և ոչ ապրին  
կենդանիքն:

Վասն որոյ աղաչեմք իմաստութեամբ հովուել  
զսեպական ժողովուրդս:

**Ի**նչպէս, օրինակ, եթե թագավորը մի  
մարդու խնամելու տա բազում և տե-  
սակ-տեսակ կենդանիներ, որոնցից ամեն մեկը  
կա՛մ ընդակեր, կա՛մ մսակեր, կա՛մ խոտակեր և  
կա՛մ հացակեր լինի, ուրեմն նրանցից ամեն  
մեկին անհրաժեշտ է իր կերակուրը տալ, և  
նրանք կենդանի կմնան: Իսկ եթե ընդակերին  
միս տա և առյուծին՝ ունդ, տգետ կենդանիներ  
ըլ չեն ապրի:

Ուստի աղաչում եմ իմաստությամբ հովվա-  
պետել սեփական ժողովրդին:



## Խրատ

**Չ**որօրինակ, ի խաւարի բանտարգել լինին մինն ի ծննդենն կոյր և միւսն տեսեալ զլոյս: Արդ, որ ի ծնն կոյրն է, անհոգ է, զի սննդակից է խաւարին, իսկ որ զլոյսն ունի՝ յերեք կողմանն ծանրանայ: Նախ, զի յիշէ զբարութիւն լուսոյն, ուստի զրկեցաւ: Երկրորդ՝ տառապանք խաւարին ի ներկայն: Երրորդ՝ յոյս ունի տեսնել զլոյսն և յապաղիլն տանջի:

**Ի**նչպես օրինակ, եթե խավարում փակված են ի ծնն կոյրն ու լուսը տեսած [մարդը]: Ահա նա, որ ի ծնն կոյրն է, անհոգ է, որովհետև համաքնակ է խավարին, իսկ որ տեսել է լուսը, երեք դժվարություն է կրում. նախ կարոտում է լուսը, որից զրկվեց, երկրորդ՝ խավարի ներկայիս տառապանքը, երրորդ՝ հույսը, որ տեսնելու է այն և տանջվում է ուշացումից:





## Խրատ

**Մ**ի որպէս զծառն յորժամ տընկեն, զգուշանան և պահեն, զի հաստատի և տայ պտուղն, նոյնպէս զխրատն պարտ է լսել և ի միտն հաստատել և ապա պտղաբերի:



**Է**վ ինչպես, երբ ծառն են տնկում, զգուշանում և պահպանում են, որ ամրանա և պտուղ տա, այդպես էլ պետք է խրատը լսել, մտապահել, որ պտղաբերի:



### Խրատ

**Ա**յլ ասեն իմաստունք թե՛ իրն, որ կորուսեալ է, պիտի խնդրօղն յայն տեղին խնդրէ՝ ուր կորոյս: ...Օրինակ, որպէս այն, որ ձգէ նետ մի պարտէզ մի՝ և այն կորնչի, պարտ է, որ զհետ այն նետին մին այլ ձգէ և ապա կարէ զառաջինն գտանել:

**Ա**սում են իմաստունները. կորած իրը պետք է փնտրել կորցրած տեղում, ինչպես օրինակ այն, որ նետն արձակվում է պարտեզում և կորչում, պետք է նույն ուղղությամբ մեկ այլ նետ արձակել՝ առաջինը գտնելու համար:



## Խրատ

Պարտ է, որք ունին զմեծութիւն ընչից՝ օգնական լինիլ և կառաւար աղքատաց, որքոց և այրեաց և ուղղել զնոսա... բնութեամբ է ստամոքսին զկերակուրն բաշխել ի բոլոր մարմին, այսպէս և պարտ է մեզ զինչս մեր հաւասարել:

Որպէս ի քաղաքի տէր և ծառայ, ճորտ և պարոն, տանուտէր և մշակ և այլքն կարօտ են միմեանց, նոյնպէս մեծատուն և աղքատ՝ կարօտ են միմեանց... զի աղքատն մեծատամբն ապրի և մեծատունն աղքատովն շինի:



արկ է, որ նրանք, ովքեր ունեն ինչք և հարստութիւն, օգնական և ուղղորդող լինեն աղքատներին, որբերին, այրիներին. բնության կարգն է՝ ստամոքսը կերակուրը բաշխում է ամբողջ մարմնին, այդպէս էլ մենք ենք պարտավոր մեր ունեցվածքը հավասարապէս բաշխել:

Ինչպէս քաղաքում տերը և ծառան, ճորտը և պարոնը, տանուտերը և մշակը միմյանց կարիքն ունեն, այդպէս էլ հարուստը և աղքատը. որովհետև աղքատը մեծատնով է ապրում, իսկ մեծատունը՝ աղքատով կառուցվում:





### Խրատ

**Ա**մենայն ոք՝ թե առաջնորդ, թե՝ վարդապետ, քահանայ և այլն, եթե ի գովելն և ի սիրելն ուրախանայ և ժրանայ և ի նախատելն և ի չարչարելն տրտմի և թուլանայ, ոչ է ճշմարիտ բարեկամ ժողովրդեանն:



**Ա**մենայն ոք՝ առաջնորդ, թե վարդապետ կամ քահանա, եթե գովելիս և սիրելիս ուրախանում և աշխուժանում է, իսկ նախատելիս կամ չարչարվելիս տրտնում և թուլանում՝ ժողովրդի ճշմարիտ բարեկամը չէ:





Ն տեսանք առ երկրագործս... Յորժամ  
հաւասար լծով համոզեն առ լծեալսն,  
գործն անխափան կատարի, իսկ թէ  
մինն խեղի, բովանդակն խանգարի:



Ի՞թե տեսանելի չէ երկրագործի  
օրինակով, երբ հավասար են լծում  
լծվորին, գործն անխափան առաջ է  
գնում, իսկ եթե մեկն ըմբոստանում է՝  
ընդհանուրին է խանգարում:





ուսանիմք սիրով, կանաչիմք յուտով,  
ծաղկիմք հաւատով և պտղաբերիմք  
բարի գործովք:

Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Մատթէի